

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐԿՈՂ ԲԻՈ-ԷԹԱՆՈԼԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

· Կենսաէթանոլի վառելիքի նոր և կայուն արտադրության հեռանկարը , որը պետք է աճեցվի ամայացված և ներկայումս սննդամթերքի արտադրության համար չնախատեսված հողատարածքներում (մոտ 143 հազար հեկտար), կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում խոստումնալից ծրագիր է, հատկապես հեռավոր բնակավայրերի համար, որտեղ բավականին բարձր է գործազրկության և ցածր է տնտեսական աճի մակարդակը:

· Հումքի տեսակետից կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում դիտարկված 20 բուսատեսակներից ընտրվել են գետնախնձորը, անասնակեր եգիպտացորենը, քաղցր սորգոն, և եղերգ (ցիկորի): Մինչդեռ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում կարելի է օգտագործել նաև՝ ծղոտի, արագ աճող հիբրդային այնպիսի ծառերի, ինչպիսիք են բարդի, ուռենի և թթենի:

· Ոլորտի նախնակա բնապահպանական ուսումնասիրության արդյունքների համաձայն, կենսաէթանոլի արտադրություն, օգտագործման բնապահպանական ազդեցությունը դրական է համարվում, որի արդյունքում կկրճատվեն ջեմոցային գազերի արտանետումները մթնոլորտ:

Կենսաէթանոլի շուկայական ծավալների գնահատումը և սահմանված առավելագույն արժեքը

Կենսաէթանոլի արտադրության շուկայական ծավալների կանխատեսումը, որը կնպաստի տարեկան հազարավոր տոննաներով համապատասխան ծավալային բլենդավորում/խառնուրդ ստանալ, ներկայացված է ստորև (10% պահանջարկի աճ՝ բենզինի համար, տարեկան հազարավոր տոննաներ).

ցուցանիշ	տարի											
	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020
5 % բլենդավորման մակարդակ (E5 վառելիք)												
բենզին	172	189	208	229	252	277	305	335	369	406	446	468
կենսաէթանոլ	8.6	9.5	10.4	11.4	12.6	13.9	15.2	16.8	18.4	20.3	22.3	24.5
10 % բլենդավորման մակարդակ(E10 վառելիք)												
բենզին	172	189	208	229	252	277	305	335	369	406	446	468
կենսաէթանոլ	17.2	18.9	20.8	22.9	25.2	27.7	30.5	33.5	36.9	40.6	44.6	49.1

Հիմնական հումքից ստացվող հնարավոր նյութերի շուկան և գների սահմանումը

Նախատեսված կենսաէթանոլի բույսից ստացվող նյութերի վաճառքը կարևորվում է այս ծրագրի տնտեսական կենսունակության ապահովման տեսանկյունից: Գետնախնձորից ստացվող հնարավոր նյութերն են՝

- խտանյութը/ճզմուկը կարող է օգտագործվել ածխաջրի բարձր պարունակություն ունեցող անասնակեր
- Անաէրոբ խմորում համար արտադրական հումք՝ ջերմության և էլեկտրաէներգիա ստանալու համար
- CO2 ոչ-ալկոհոլային խմիչքների արտադրության և չոր սառույցի համար

Տեխնիկական կարևոր լուծումներ և առաջարկություններ

- Հայաստանում բիո-էթանոլի արտադրության զարգացման գերադասելի/նախընտրելի սցենարը կլիթանի երկու վերամշակող արտադրությունների գործարկմանը յուրաքանչյուրի արտադրական հզորությունը տարեկան 7.հազ.տ, տեղադրված տարբեր վայրերում, կարճաժամկետ և միջնաժամկետ պայմաններով:
- Կենսաէթանոլի ամենահեռանկարային արտադրական հումքը, որը կարող է աճեցվել մեծ քանակությամբ ոչ բերրի տարածքներում մինչև 2014թ-ը՝ գետնախնձորն է, անասնակեր եգիպտացորենը, քաղցր սորգոն և եղերգը:

Գետնախնձորից ստացվող բիո-էթանոլի արտադրության ֆինանսավորման ընդհանուր պահանջները

Արտադրության և ֆինանսավորման պահանջների համեմատական ծախսերը ներկայացված են ստորև՝

Հիմնական գնային տարրերը	Գետնախնձորի տարեկան 7 հազ.տ հումք
Կենսաէթանոլի ծրագրի ընդհանուր ծախսերը	2,148,000
Իրականացման ծախսեր	311,000
Ծրագրի նախապատրաստման ծախսեր	560,000
պարտավորություններ և վճարներ	126,000
ֆինանսական խորհրդատվության և կազմակերպչական ծախսեր	268,000

ընդհանուր աշխատանքային կապիտալը	1,000,000
կառուցման տոկոսադրույքը	720,000
ընդհանուր ծախսերը	2,985,000
ծրագրի ընդհանուր ֆինանսավորումը	17,000,000

Նախնական ֆինանսական վերլուծություններ

Կենսավառելիքի ծրագրի ֆինանսական վերլուծության հիմնական մեծությունը/տարրը կենսաէթանոլի, արտադրական հումքի, հիմնական հումքից ստացվող նյութերի և էլեկտրաէներգիայի գներն են: Կանխատեսումները հետևյալն են՝

- կենսաէթանոլի մեծածախ արժեքը. բիո-էթանոլի մեծածախ գները ֆինանսական կանխատեսումներով կազմում է \$1.34 / 410 դրամ/ 1 լիտր կենսաէթանոլի համար: Ճշգրիտ գնի մեջ մտնում է բիո-էթանոլի 1 լիտրի 1.34 ԱՄՆ դոլարը (\$ 0.01/լիտր) և 1% վաճառքի գինը;

- կենսաէթանոլի արտադրանքը. ֆինանսական վերլուծության ենթարկվեց գետնախնձորի (80% կամ պակաս խոնավություն) ամեն տոննայից ստացվող 92.4 լիտր կենսաէթանոլի արտադրանքը: Ուսումնասիրվեցին գետնախնձորի տարբեր տեսակներից ստացվող արտադրանքը, իսկ Հայաստանում ներկայումս անցկացվող հետազոտությունները պարզեցին որոշ հիբրիդային տեսակների բարձր արտադրողականությունը , որոնք ներգրավված չէին ֆինանսական վերլուծությունների մեջ:

- Արտադրական հումքի արժեքը. Հումքի գինը սահմանվում է տվյալ բուսատեսակի նվազագույն ներդրումների վերադարձման 15%-ի դեպքում: Այս գինը կիրառվում է ֆինանսական մոդելավորման ընթացքում և ներկայացնում է այն առավելագույն արժեքը, որ օգտագործվող բույսից կարող է ստացվել հումքի համար, կամ ցանկացած այլ ցածր արժեք, որ կարող է հավելյալ եկամուտ կամ վերադարձի բարձր մակարդակ ապահովել ներդրողի համար: